Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի
27-ի №314Ն որոշմամբ

ԿԱՐԳ

էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու

Սույն կարգով սահմանվում է էլեկտրաէներգետիկական համակարգին (այսուհետ՝ Համակարգ) էլեկտրաէներգիա արտադրող նոր կայանների (այսուհետ՝ Նոր կայաններ) միանալու և Համակարգին միացած էլեկտրաէներգիա արտադրող կայանների (այսուհետ՝ Արտադրող կայաններ) հզորության ավելացման արդյունքում էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող և(կամ) էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց էլեկտրատեղակայանքներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու ընթացակարգը:

1. Կարգում օգտագործված հիմնական հասկացությունները

Կառուցող՝	արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
Արտադրող՝	էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ, որը ավելացնում է իր կայանների արտադրական հզորությունը.
Բաշխող՝	էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
Համակարգի օպերատոր՝	էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Հաղորդող՝ էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Համակարգին Նոր կայանների միացման կամ Արտադրողի կայանների հզորության ավելացման արդյունքում էլեկտրատեղակայանքների վերակառուցման աշխատանքների նախագծերը մշակելու համար անհրաժեշտ տեխնիկական առաջարկությունները (այսուհետ՝ Տեխնիկական պայմաններ) Կառուցողին կամ Արտադրողին առաջադրում է Բաշխողը:

2.2 Համակարգի օպերատորի օպերատիվ ենթակայության ներքո գտնվող էլեկտրատեղակայանքների (այդ թվում ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքների) վերակառուցման վերաբերյալ առաջարկները մշակում է Համակարգի օպերատորը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2004 թվականի դեկտեմբերի 24-ի №176Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ապահովման կանոնների» պահանջները:

2.3 Բաշխողը Տեխնիկական պայմանները մշակում է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի պահանջները, ինչպես նաև Կառուցողի կամ Արտադրողի ներկայացրած հուսալիության ցուցանիշները:

2.4 Տեխնիկական պայմանների մշակման համար անհրաժեշտ բոլոր համաձայնեցումները Հաղորդողի, Համակարգի օպերատորի հետ իրականացնում է Բաշխողը:

2.5 Տեխնիկական պայմանները Բաշխողը պարտավոր է մշակել՝ ելնելով միացման կամ էլեկտրատեղակայանքների վերակառուցման աշխատանքները նվազագույն ծախսումներով իրականացնելու պայմանից:

3. Տեխնիկական պայմանների տրամադրման ընթացակարգը

3.1 Կառուցողը Տեխնիկական պայմաններ ստանալու համար դիմումի հետ Բաշխողին է ներկայացնում.

1) Հանձնաժողովի կողմից Կառուցողին տրված արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիայի պատճենը,

2) տեղեկություններ Նոր կայանի կանխատեսվող տեխնիկական հարաչափերի վերաբերյալ՝ համաձայն Բաշխողի կողմից սահմանված ցանկի:

3.2 Արտադրողը Տեխնիկական պայմաններ ստանալու համար դիմումի հետ Բաշխողին է ներկայացնում տեղեկություններ կայանների հզորության ավելացման արդյունքում էլեկտրատեղակայանքների տեխնիկական հարաչափերի կանխատեսվող փոփոխությունների վերաբերյալ՝ համաձայն Բաշխողի կողմից սահմանված ցանկի:

3.3 Բաշխողը Տեխնիկական պայմանները մշակում և դիմողին է ներկայացնում դիմումն ստանալուց մեկ ամսվա ընթացքում:

3.4 Տեխնիկական պայմանները տրվում են դիմողի հետ փոխհամաձայնեցված ժամկետով՝ բայց ոչ պակաս, քան երկու տարով:

3.5 Նոր կայանի միացման կամ արտադրող կայանների հզորության ավելացման արդյունքում էլեկտրատեղակայանքների վերակառուցման աշխատանքների նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման ընթացքում տեխնիկական հարաչափերի փոփոխության դեպքում Կառուցողը կամ Արտադրողը պարտավոր է գրավոր տեղեկացնել դրանց մասին Բաշխողին՝ անհրաժեշտության դեպքում Տեխնիկական պայմաններում համապատասխան փոփոխություններ կատարելու համար: Այս դեպքում Բաշխողը փոփոխված Տեխնիկական պայմանները կամ դրանք անփոփոխ թողնելու մասին եզրակացությունը Կառուցողին կամ Արտադրողին է տրամադրում դիմումն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում:

3.6 Տեխնիկական պայմանների գործողության ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի փոխհամաձայնությամբ:

3.7 Այն դեպքում, երբ Նոր կայանը Համակարգին միացնելու կամ Արտադրող կայանի հզորության ավելացման համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել Բաշխողի և(կամ) Հաղորդողի ցանցերում, Բաշխողը և (կամ) Հաղորդողը պարտավոր են իրենց միջոցներով կատարել համապատասխան Նախագծերը և իրականացնել անհրաժեշտ բոլոր աշխատանքներն իրենց հաշվեկշռում գտնվող

էլեկտրատեղակայանքներում: Այդ ներդրումները ենթակա են Հանձնաժողովի հետ համաձայնեցման:

4. Միացման պայմանագիրը

4.1 Սույն կարգի 3.7 կետում նշված դեպքում Կառուցողն ու Բաշխողը կամ Արտադրողն ու Բաշխողը կնքում են միացման պայմանագիր, որով սահմանվում են Նոր Կայանը Համակարգին միացնելու կամ Արտադրող կայանի հզորության ավելացման արդյունքում անհրաժեշտ աշխատանքների կատարման ժամկետները, այդ ժամկետների խախտման դեպքում կողմերի պատասխանատվությունը: Հաղորդողի ցանցերում միացման պայմանագրով սահմանվող աշխատանքների կատարման ժամկետները Բաշխողը պարտավոր է համաձայնեցնել Հաղորդողի հետ:

4.2 Պայմանագիրը կնքելու համար Կառուցողը կամ Արտադրողը Բաշխողին են ներկայացնում փորձաքննություն անցած Նախագիծը:

4.3 Նոր կայանները Համակարգին միացնող կամ Արտադրողի վերակառուցված էլեկտրահաղորդման գծերը լարման տակ դնելու համար Կառուցողը կամ Արտադրողը դիմումի հետ Բաշխողին են ներկայացնում.

1) 6(10) կՎ և բարձր լարման ցանցին միանալու դեպքում՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող պետական լիազոր մարմնի կողմից տրված էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացությունը (թույլտվությունը).

2) 0,4 կՎ լարման ցանցին միանալու դեպքում՝ էլեկտրահաղորդման (օդային, մալուխային) գծերի փորձարկման արձանագրությունները և շինարարության ավարտի վերաբերյալ ակտի պատճենը: